

—Հարգ է, մայրի՛կ... ե՛ս սպանեցի...
Ու միացայ խմբին :

Հրացանում ե՛նք. Շուտով սրերի կը դե-
մենք . . .

Ո՞վ մեզնից արդեօք կհնդանի պիտի մնայ...
.

Մնա՛ս բարեւ, բարեկամ . . .

Թիֆլիս Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



ՏԳԵՏ ԱՋԳԻ ՀԱՆՃԱՐԻՆ

— 0 —

Հանճար էիր, աստուածները զեզ ծընան .
Յոռնկ եթերում կաթի տեղ լոյս ծըծեցիր .
Որոցքիդ շուրջ անգիւշ վարդեր ծաղկեցան .
Անմահների վեհ օրօրով ներհեցիր :

Դու լոյսի մէջ, լոյս շընչեցիր, լոյս տեսար .
Նրազները ծառայեցին զեզ հըլու .

Դու խըմեցիր աստուածներին հետ նեկտար .
Ու շընորհքը դու ըստացար երգելու :

Սեւ հող հազար . . . Այգ միջոցով եւ մի օր
Ոտք կոխեցիր այս կեղծիքի պեղծ հովիտ .
Նըւերուեցար արեւ հողում զո ըովոր
Ճաւերով լի տըզէտ, խաւար, խեղճ ազգիդ :

Երգել միայն դու գիտէիր . . . երգեցիր ,
Բայց ոչ ազգիդ ծանօթ հինցած նըւազով .
Դու խոր երգեր, դու նոր երգեր երգեցիր ,
Գո զընարը հընչեց հազար լարերով :

Դու երգեցիր առեղուածը այս կեանքի .
Վերջալուսի հոգեւարքը վեհախառ,
Դու երգեցիր ծաղկները եղբմի ,
Մեռելների գիշերները մահավառ :

Այն լուսեղէն սլալասները երգեցիր ,
Ուր հանգչեցաւ օրօրոցը զո նախկին .
Այն լոյս կեանքի աշխարհները երգեցիր ,
Ուր ցայտում են վըտակները պատրանքին :

Խօսք լուսեցիր սեւ մըրրիկի սոյլերում .
Հին անտառը իր վըրտերից զեզ պատմեց .
Կոյս ծովակը, լուսնի շողում, փոթորկում,
Մերուկ ժայռի զաղսանքները զեզ մասնեց :

Դու երգ տըւեր ծաղկին, ցողին եւ վարդին,
Ու նոցա հետ խօսակցեցիր երգերով .

Դու ըստ տըւեր մահին, լացին, հառաչին,
Նոցա երգը թարգմանեցիր մեր լեզուով :

Դու մեկնեցիր հայեացքներին մօռնջ լեզուն .
Սըրտերի մէջ տեսար անբաւ աշխարհներ ,
Դու պատմեցիր հողիներինց երազուն .

Դու ա՛յն տեսար, ինչ որ ոչ ոք տեսաւ
դեռ . . .

Դորա համար զեզ շատ քիչիր հասկացան ,
Մով ազգիդ մէջ մի ըստ միայն կաթիլներ .
Դորա համար զո երգերը չուենցան
Այն «արժէքը», ինչ հասարակ երգիչներ :

Սեւ լաց եղար անմարդ ու խուլ տեղերում .
Անթեցիր այն օրը երբ հող հազար . . .
Մինչ վերջապէս յիմարատան անկիւնում
Ձարչարանքով հազած հողըդ մերկացար :

17 Յունիս 99 .

Բերլին

ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ԱՂՕԹԷԸ

— 0 —

Գըթա՛, ո՞վ Տէր, մենք անհայր ենք ու ան-
մայր ,

Մեր հայրերը կոչկոճամահ մեռուցին .

Մեր մայրերը ցաւից զարձան խնւազար .

Մոխրներում մեզ մեն-մենակ թողուցին :

Անգուժ թուրքից մի փըշուր հաց խընդրե-
ցինք .

Մեր հօր սիրտը առաջարկեց մեզ ուտել ,

Յուրա գիշերում քընկու տեղ խընդրեցինք .

Դերեզմանում առաջարկեց մեզ ներհնել ,

Գըթա՛ւ ո՛վ Տէր • զըթա՛ւ, Յիսո՛ւս մարգաւեր,
Դո՛ւ ո՞ր մանկանց փեղ կանչեցիր սիրարար •
Կանչիր մե՛զ էլ, կանչի՛ր զու ձոց, ո՛վ
հայր մեր •

Աշխարհից ենք, բայց աշխարհին ենք օտար •
8 Յունիս 99 •

Բերլին

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՐԳԸ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՆՔ ԿԱՐՕՏ

— 0 —

Ո՛վ իշխաններ, թագաւորներ աշխարհի,
Բաւալիա՛ն է որքան մատաղ մեր որդիք
Կրօններում զո՛հ գընացին կապարի
Կամ տուն գարձան հաշմանգամ ու վերալիք •

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօղ •
Մեր որդիներ խաղաղութեան են կարօտ •

Բաւալիա՛ն է որքան մայրեր խառնեցին
Պըզտոր արցունք իրենց որդոց վարդ արեան •
Բաւալիա՛ն է որքան հարսեր թառմեցին -
Ըսպասելով փեսաների գալըստեան •

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօղ •
Մայրեր, հարսեր խաղաղութեան են կարօտ •

Բաւալիա՛ն է որքան սրտեր յուզեցին
Պատերազմի աղաղակից վայրենի •
Որքան հայրեր իրենց որդոց դաս աւելին՝
— Բարբարոս դաս, — թափել արիւն նըմանի •

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօղ •
Բոլոր հայրեր խաղաղութեան են կարօտ •

Մենք չե՛նք ուզում հարբատութիւն ու ընծան
Որ խըլած են մի այլ ազգից կործանւած •
Մենք չե՛նք ուզում չողուն փառքի ծխածան
Որ օտար մերարցունքում է կամարած •

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօղ •
Բոլոր ազգեր խաղաղութեան են կարօտ •

Ո՛վ իշխաններ, թագաւորներ աշխարհի,
Ա՛խ, ե՛րբ մեզ հետ ձեր գահոյքի բար-
ձունքից

Կը քարոզէք աննկնց սրբառով եւ արի՛
Նղբայրութեան աւետարանը անբիծ •

«—Անկցի՛ք վըրէժ, անկցի՛ն կապար ու վառօղ •
«Մարդկութիւնը խաղաղութեան է կարօտ •

ԵՐԳԵՐ

Ա

Կ'ուզէի քեզ հետ մի նաւակ նըստել,
Ու թիավարել լուռ ծովի վերայ •
Երբ պարզ երկընքում լուսինն է ծագել,
Հանգարտ շողում է զուռն ջրերի վերայ •

Քար լըռութեան մէջ կ'ուզէի միայն
Թիանց հետ սըրտիս զարկերը լըսուէր •
Լուսնի շողի տակ մեր հեղուկ ճամբան
Կ'ուզէի, որ ա՛խ յաւիտեան տեւէր •

Բ

Մի՛ աշխարհի որ մենք յոգնած ենք ալայէս
Աւաղտ երկնի տակ, մըթնում ու հողմում •
Որքան շատ յոգնինք, անգի՛ն նազելիս,
Այնքան եւ անուշ կը քընենք հողում •

Եկ ձեռք ձեռքի տանք ու քալենք յամառ
Դէպ ի նըպատակ՝ մըթնում ու հողմում •
Մինչեւ վերջին շունչ յոգնինք անգաղար •
Որ ամենից խոր մենք քընենք հողում •

Գ

Օ՛, մի՛ սարսափիր մահուան ճանկերից •
Ես քեզ հետ կուգամ, չեմ թողնիլ մենակ •
Այս իմ բազուկը դոր քեզ միշտ հըսկեց •
Քեզ կը պաշտպանէ եւ մահուան գիծաց •

Օ՛, մի՛ սարսափիր մահուան խաւարից
Ես քեզ հետ կուգամ, չեմ թողնիլ մենակ •
Այս սիրտը որ քեզ միշտ առաջնորդեց •
Քեզի լսյս կուտայ եւ մութ հողին տակ •

ԱՐԱՄ ԶԱՐԴԴ

Բերլին, 1899

